

Ժամկոչի բնակարան է հիմա, ու ոստիկանութիւնը վարձքով կը նստի աղգային ուրիշ կալուածի մը մէջ:

Եաշը աւերա՛կ, այն փառաւոր Եաշը...:

Պաքովի հին դպրոցին տեղը հիմա տէրտէրն ալ չիլոյ՜...:

Ֆօքշանի մէջ աղջկանց ու մանչերու դըպրոցներուն երկու փառաւոր չէնքերը դէմ դեմաց իրար կը հեգնեն:

Թրկօ-Օքնայի մէջ հետքն իսկ չկայ դըպրոցին:

Եղիսարէթուպուիսը՝ ամայի, ծուռ կը նայի Մխիթարեաններուն, որոնք զինք փոշիներուն լքեցին:

Սթրուական, ուր քանի մը տարի չնչնց ուսմանահայ որբանոցը, պանդոկ է հիմա, ու Նահատակաց մատուռը, զոր օր մը այնքան սիրով օծեցինք բլուրի մը կատարը, կուլա՛յ մի-նակ...:

Այս պատկերն ալ պէտք էր որ տայի ուսմանահայ դաղութին կեանքը պատմած ատեն: Կրթական շարժումը պատմողը պարտաւոր էր այս ողբն ալ ընէր...:

* * *

Ռումանահայ դաղութին կեանք ներարկելու բոլոր փորձերը, սակայն, դատապարտուած են ուշ կամ կանուխ մարելու:

Գաղութը կը քամուի, կը հատնի ներսէն:

Հեղեղն է, որ կուգայ տաշեղները առնել տանելու: Ընդունայն են թումբի այս փխրուն կտորները՝ խոժող ալիքներուն դէմ:

Դպրոցները, թերեւս, կարենան պահ մը կասեցնել հեղեղը, բայց անոնք պիտի չկրնան սերունդները իրարու կապել:

Գաղութի մը մէջ, որ 600 տարի դիմադրեբեր է, յիսուն տարուան իսկ կեանք չունինք:

~~~~~

## ՔԻՒՐՏԵՐՈՒ ԵՒ ՀԱՅԵՐՈՒ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐՈՒ ՓՈՒԼԵՐԸ ԵՒ ԱՆՈՆՑ ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Գրեց՝ Կ. ՍԱՍՈՒՆԻ

### ԳՂՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

#### I

16-րդ դարասկզբէն ասդին, ինչպէս տեսանք նախորդ գլուխին մէջ, քրտական իշխանապետութիւնները հաւաքական ճիգ մը չըրին բացարձակ անկախութիւն մը ձեռք բերելու, պետութիւն դառնալու նպատակով, ինչպէս կը բաղձար քրտ աղգային բանաստեղծը, թէւ՝ այդ իշխանապետութիւնները իրենց անջատ, կէս-անկախ գոյութեան պահպանման համար միշտ ըմբոստ տարր մը մնացի, թրքական տիրապետութիւնը անուանական դարձնելու աստիճան:

Հայերն ու քիւրտերը (մէկի տկարութեան, միւսի պառակտման եւ երկուքի անդիտակցութեան հետեւանքով) քաղաքական համաձայնութեան մը չյանդեցան երեք երկար դարերու ընթացքին, եւ պատեհ առիթներէն չօգտուե-

ցան՝ ազատագրական միացեալ շարժման մը համար:

Պատմական նշանակութիւն ունեցող քաղաքական փոխյարաբերութիւններու բացակայութիւնը, արգելք մը չէր, սակայն, որ հայերն ու քիւրտերը ամենօրեայ շփման մէջ ըլլային, նախ՝ որպէս դրացիներու (տեղական բնիկներու) եւ յետոյ՝ որպէս հպատակ տարր (հայր քիւրտին հպատակ): Այս փոխյարաբերութիւնները ճակատագրական նշանակութիւն ունեցան երկու աղգերու համար ալ: Որպէսզի մեզի պարզ երեւնայ 19-րդ դարու վերջին կէսի (1850-1900) հայ-քրտական յարաբերութիւններու ծայրայեղ սրումը, մենք քննութեան պէտք է առնենք 19-րդ դարը նախորդող երեք հարիւր տարուան ներքին ղէպերը:

Այս քննութիւնը անհրաժեշտ է նաեւ այն պատճառով, որ բացատրուի հայոց զիրքը